

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Բանասիրական Գիտությունների Դոկտոր,
Երեւանի Պետական Համալսարանի Հայ
բանասիրության ֆակուլտետի՝ ակադ.
Հրանտ Թամրազեանի անուան Հայ գրական-
նութեան պատմության ամպիոն

ՔՈՒՉԱԿԵԱՆ ԱԻԱՆԴԱՋՐՈՅՑՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ԿԱՐԵՒՈՐՈՒՄԸ ԱՐԴԻ ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Արդէն հինգ դար Ն. Քուչակի անունը շարունակաբար հնչում է մեր ժողովրդի շուրթերին: Խառակոնիսից շատ հեռու ապրած եւ անգամ այն շտեմած մարդիկ անշափ շատ են սիրել նրան՝ մեծանուն աշուղ ու բանաստեղծ Ն. Քուչակին:

Բանաստեղծի անուան շուրջ ծագած բանասիրական վէճերը մեզանում մօտ հար-
իւր տարի չեն դադարում: Այդ իսկ պատճառով մենք առանձնակի կարեւորում ենք
աւանդազրոյցները՝ ժողովրդի անկեղծ սիրոյ արտայայտութիւնները, եւ պիտի փորձենք
նրանցում բանաստեղծի մասին պահպանուած նիւթերի հիման վրայ նրա ծննդեան
վայրի, անձի ու գործի շրջանակները հնարաւորինս ճշգրտելու ճանապարհով նրա
կրթութեան եւ դաստիարակութեան մանրամասները բացայայտել: Դա մի կողմից հը-
նարաւորութիւն կը տայ՝

ա) Պատկերացնելու բանաստեղծի կենսագրութեան իրական պատկերը,

**բ) Տեսնելու՝ ինչպիսին է նրա ստեղծած աշուղական դպրոցի թողած հետքը ինչպէս
ժամանակի հայ իրականութեան, այնպէս էլ 16-րդ ու յետագայ դարի բանաստեղծական
արուեստի վրայ:**

Վերջին 130 տարիների ընթացքում արդէն աւանդական դարձած քուչակա-
գիտութիւնը բաւականին բարդ եւ հակասական մի ճանապարհ է անցել: Մինչեւ
1882 թ. **Ար. Տեկանցի «Հայերգի»** հրատարակութիւնը՝ կարեւորագոյն որոշ հարցեր
քննարկման առարկայ արդէն հանդիսացել են: Աշուղ **Թոռ Քուչակին** պատկանող
Աւետարանը նրա մահից յետոյ՝ 1637 թ., նուիրուել է Խառակոնիսի Ս. Թէոդորոս
եկեղեցուն՝ Տէր Մելիքսեթի ձեռամբ: Թոռը ձեռագրի յիշատակարանում պապին
անուանում է **Նահապետ վարպետ**՝ այդպիսով յարգանքի տուրք մատուցելով մեծ
աշուղ-բանաստեղծին²: Բանաստեղծի անունը նոր շրջանի գիտնականներից առա-
ջինը 1869 թ. յիշատակում է **Ղ. Ալիշանը**՝ իր «Յուշիկը հայրենեաց Հայոցում», **Քու-
չակ Հաղուանցի** ձեռով³: Այսպիսով **Ար. Տեկանցի «Հայերգով»** սկսւում է քուչա-
կագիտութեան խանդավառ վերելքի 50-ամեակը, երբ **Ղ. Ալիշանի, Ար. Տեկանցի**

¹ Տե՛ս **Տեկանց Ար.**, Հայերգ, մեղեդիք, տաղք եւ երգք, Թիֆլիս, 1882, էջ ԺԺԱ: Նաեւ՝ **Նահապետ Քուչակի
բանաստեղծական աշխարհը**, (առաջաբանը՝ **Տ. Ս. Թամրազեանի**), Երեւան, ԵՊՀ հր., 2001, էջ 12-18:

² Տե՛ս **Տեկանց Ար.**, Հայերգ, մեղեդիք, տաղք եւ երգք, էջ ԺԱ:

³ Տե՛ս **Ալիշան Ղ.**, «Յուշիկը հայրենեաց Հայոց», հ. Բ, Վեներիկ, 1870, էջ 130:

կողքին յայտնուում են մեծատաղանդ Նորայր Բիզանդացին, քիչ ուշ՝ Արշ. Զօպանեանը: Սկզբում խնդրի տարածմանն իր անուրանալի նպաստն է բերում Մ. Աբեղեանը՝ բանասիրորէն կերտելով Քուչակի գիտական կենսագրութիւնը՝ Գէորգեան ճեմարանի իր սաներին թէգեր յանձնարարելով քուչակեան թեմաներով⁴: Սակայն 20-րդ դարի քսանականների վերջից նա փոխում է մօտեցումը քուչակեան խնդիրներում: Աւելի ուշ՝ 60-80-ականներին այդ տեսակէտին է յանգում Աս. Մնացականեանը⁵, որով նրանք մեզանում առաջադրում են հակադիր մի նոր տեսակէտ: Ակադ. Հր. Ս. Թամրազեանը գրում է. «Մ. Աբեղեանն անվերջ ձգտում է կենսագրական փաստերի բանասիրական հաստատմանը՝ յետագայում աչքաթող անելով իր իսկ ստեղծած այս զուգահեռը. որոնումների ընթացքում չի գտնում իր ուզածը, ընկնում է մի ծայրայեղութեան մէջ՝ փորձ անելով հակառակ հիացողների եւ գնահատողների տապալել բանաստեղծական մեծութիւնը: ...Արիստակէս վարդապետին մա շատ հանգիստ համարում է խաբեբայի պէս մի բան»⁶: Ամփոփելով եղած արդիւնքները՝ գիտնականը նաեւ նկատում է. «Ընդհանուր առմամբ պատմական, հնագիտական, տեղեկութիւնները գրեթէ ճշգրտութեամբ մեզ տալիս են անժխտելի տուեալներ Քուչակի ծննդեան ու մահուան, բանաստեղծական արուեստի, գերեզմանի, թաղման վայրի մասին»⁷: Պէտք է նաեւ յատել, որ կուտակուած բաւականին խայտաբղէտ ձեռագրական նիւթը դեռ կարող է բաւականին նոր հնարաւորութիւններ ընձեռել ուսումնասիրողներին: Նրա ծննդավայրը Վանայ խառակոնիս գիւղն է, թէեւ մասնակիօրէն շրջանաւում է եւ Ակնը⁸: Մահացել է 1592 թ.՝ ծեր հասակում, եւ թաղուել խառակոնիսում⁹: Նկատի ունենալով այդ փաստը՝ ենթադրում է, որ նա ծնուել է հաւանաբար մօտ 1490-ականներին¹⁰: Քուչակի կենսագրութիւնը դեռ կարելի է լրացնել ձեռագրական, հայրենների պոետիկայի տեքստային ու արտա-տեքստային իւրայատկութիւնների քննութեան հիման վրայ, ինչպէս եւ պահպանուած աւանդազրոյցների նոր տուեալներով¹¹, որոնք հրաշալիօրէն բացայայտում են Քուչակի (Չիչակի) կենսագրութեան կարելոր մանրամասներ: Արդեօք քուչակամբերժ բանասիրութիւնը կարո՞ղ է ցոյց տալ մի այլ հայ հեղինակ, որի մասին ժողովուրդն այդքան աւանդազրոյց յօրինած լինի:

Մերօրեայ բանասիրութիւնը եւ պատմագիտութիւնը յաճախ են դիմում աւանդազրոյցների օգնութեանը՝ պատմական անձանց մասին տեղեկութիւններ քաղելու, երբ սկզբնաղբիւրներում բացակայում են կենսագրական-փաստական տուեալները¹²: Դա արդէն գիտականօրէն օգտագործուած է Գր. Նարեկացու դէպքում¹³: Այո՛, միջնադարեան սիրային ու պանդխտութեան հայրենների հեղինակի կենսագրութեան

⁴ Աբեղեան Մ., Հայոց հին գրականութեան պատմութիւն, հ. 2, Երեւան, 1946, էջ 421: Նաեւ՝ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, (առաջաբանը՝ Հ. Ս. Թամրազեանի), էջ 18-21:

⁵ Տե՛ս Մնացականեան Աս., Հայրեններ, Երեւան, «Նաիրի» հր., 1995:

⁶ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 20-21:

⁷ Նոյն տեղում:

⁸ Տեկանց Ա., Արշակ Զօպանեանին յղած իր նամակում Ակնը եւ Երզնկան էլ է նշում, տե՛ս նոյն տեղում, էջ 243:

⁹ Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, (առաջաբանը՝ Հ. Ս. Թամրազեանի), էջ 128:

¹⁰ Աբեղեան Մ., Երկեր, հ. Բ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հր., 1967, էջ 19-23:

¹¹ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 85-126:

¹² Գրիգորեան Գ., Հայ բանահիւսութեան փոստոմատիա, Երեւան, 1974, էջ 204-206: Большая советская энциклопедия, т. 20, М., 1975, ст. 1489.

¹³ Տե՛ս Ղանալանեան Ա., Աւանդապատում, Երեւան, 1969, էջ 306-320: 1173 թ. Ներսէս Լամբրոնացու ձեռնով գրուած բանաստեղծի վարքը եւ աւելի ուշ ժողովրդական աւանդազրոյցները յետագայ կենսագիրներն օգտագործել են որպէս սկզբնաղբիւր: Տե՛ս նաեւ՝ Խաչատրեան Պ., Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, հ. Ա, Ս. Էջմիածին, 1996, էջ 202-221:

շատ մանրամասներ ճշգրտուել են յետագայում¹⁴, եւ դրանց անդրադարձել է նաեւ Մ. Աբեղեանը¹⁵: Սակայն 1927թ.¹⁶ սկիզբ առաւ մի բանավէճ Աբեղեանի եւ Ա. Զօպանեանի միջեւ: Զօպանեանը համոզուած էր, որ միջնադարեան հեղինակային հայրենների (մանաւանդ՝ սիրային) մեծ մասի յօրինողը Ն. Քուչակն է¹⁷, այդ կարծիքը չէր կիսում Մ. Աբեղեանը:

1995 թ. յետ մահու լոյս է տեսնում Աս. Մնացականեանի կազմած հայրենների ժողովածուն¹⁸, որով հեղինակը հետեւում է Մ. Աբեղեանի տեսակէտին: Ի տարբերութիւն Աբեղեանի՝ վերջինս հայրենի (քառեակի) ժանրը նոյնացնում է «հայրենի շափաւ» 15 վանկանի տողով տաղաչափական մեծածաւալ երկերի հետ, ինչպէս եւ խօսում, այսպէս կոչուած, տաղ-հայրենի, պոեմ-հայրենի մասին, ինչը հակասում է հայրենի (քառեակի) կառուցի մասին ընդունուած գրականագիտական պատկերացմանը¹⁹: Իսկ հայրենների պատկանելիութեան հարցում հակուած է ժողովրդականի գերակայութեան ըմբռնմանը: Ի հարկէ, ոչ ոք չի ժխտում ժողովրդական հայրենների բարձր արուեստը: Սակայն պէտք է գնահատուեն նաեւ հեղինակային հայրենները²⁰, որոնց յօրինողներին պէտք է յայտնաբերել, յայտնաբերելու դէպքում էլ պատշաճ տեղ տալ գրականութեան պատմութեան մէջ: Հարցն անտեսելն այն փակուղին է, որից քուչակագիտութիւնը դժուարութեամբ դուրս էր եկել անցեալ դարի 30-40-ականներին Արշ. Զօպանեանի, Ն. Ակինեանի, Հ. Օշականի, Աւ. Ղուկասեանի եւ այլոց շնորհիւ: Սակայն որոշ հետազոտողներ մերժողական դիրք են բռնել ու երբեմն վէճերը հասցնում են ծայրայեղութեան²¹: Կայ մի կարեւոր փաստ, որ քուչակամերժ խումբը չի հրապարակում ու գիտակցաբար այդ մասին լռում է: Աս. Մնացականեանն (1912-1983) իր «Հայրեններ» ժողովածուն, որ հրատարակուեց 1995 թ.²², աւարտած է եղել 70-ականների վերջին: Նա հրատարակութիւնն անյայտ պատճառներով թողել է ապագային: Կասկած չկայ, որ գիտնականը լուրջ տարակոյսներ է ունեցել այն հրատարակել-չհրատարակելու հարցում, քանզի նա հէնց այդ ժամանակ կարող էր գիրքը տպագրել: Բայց կռահել է, որ քուչակամերժութիւնը մեծ շահարկումների դուռ է բացում ոչ միայն մեր իրականութեան համար, այլ նաեւ թուրք-ադրբեջանական պատմա-մշակութային արկածախնդիրների առջեւ, որոնք վաղուց զբաղուած են հայկական մշակոյթի ու հայ հեղինակների լայնածաւալ կողոպուտով ու սեփականմամբ: Աւելին, հակահայ քարոզչութիւնն այժմ յիշեալ երկրներում սկսում է մանկանց

¹⁴ Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 128 (Քուչակի գերեզմանի արձանագրութիւնը լուսանկարել է Աշխ. Քալանթարը եւ վերծանել՝ Մ. Աբեղեանը):

¹⁵ Նոյն տեղում, էջ 316-317: Նաեւ՝ էջ 20-21: Հր. Ս. Թամրազեանի կողմից շրջանառուեցին նաեւ աւանդաբոյցները, տե՛ս նոյն տեղում, էջ 30-32:

¹⁶ Տե՛ս **Աբեղեան Մ.**, Հին գուսանական ժողովրդական երգեր, (ՀԽՍՀ պետհամալսարանի «Տեղեկագիր»), 1927-1930: Նաեւ՝ **Աբեղեան Մ.**, Երկեր, հ. Բ, էջ 11-23: Այս շրջանում այդ կարծիքին է միայն Լ. Շանթը, որ հիմնականում հայրենագրութեան մէջ հակուած է դրանց բանահիւսական ծագման տեսակէտին. տե՛ս **Շանթ Լ.**, Երկեր, հ. 9, Պէրոպ, 1946, էջ 230-232:

¹⁷ **Զօպանեան Ա.**, Նահապետ Քուչակի դիւանը, Փարիզ, 1902. Նաեւ՝ տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 163-176: **Զօպանեան Ա.**, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 3-143:

¹⁸ **Մնացականեան Աս.**, Հայրեններ, Երեւան, «Նաիրի» հր., 1995. տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 13-14:

¹⁹ Տե՛ս **Մխիթարեան Ս.**, Նահապետ Քուչակի խնդիրը արդի բանասիրական գնահատումներում, Գրական թերթ, ք. 42/2917/ 14 դեկ. 2007, էջ 3. Նոյնը՝ ք. 43/2918/ 21 դեկ. 2007:

²⁰ Տե՛ս Nahapet Khutschak (Haapet Kyчak, **Նահապետ Քուչակ: Կազմ. եւ առաջ. գրեց՝ Լ. Մկրտչեանը:** Տրում է միջին հայերէնով. գերմաներէնով. ռուսերէնով), Հարիւր ու մէկ հայրեն, Երեւան, Սովետ. գրող, 1987, էջ 7-9, 223-225:

²¹ Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 9-14:

²² **Մնացականեան Աս.**, Հայրեններ, Երեւան, «Նաիրի» հր., 1995:

մանկա-մսուրային հասակից: Իսկ հայրենասէր գիտնականն առիթ էր ունեցել պայքարել այսպէս կոչուած աղբբեջանական բունիաթովականութեան դէմ²³ (մի հակահայ շարժում, որ արմատաւորուած էր խորհրդային Աղբբեջանում, եւ մեր օրերում դեռ կեղծ «ալբանագիտութիւնն» այդ հողի վրայ է իր սեւ գործը տեսնում): Գիտենք, թէ ինչպէս է գիտնականը մերժել կեղծ «ալբանագիտութեան» «նուաճումները» եւ այդ պատճառով էլ թերեւս նախընտրել է այլեւս չէզոք դիրք բռնել քուլակեան խնդրում: Բայց հարցը մենք չենք պատճառաբանում միայն աղբբեջանական գործոնով, այլ լուրջ այդ գիտնական-բանաստեղծը չէր կարող խղճի խայթ չզգալ նաեւ հանճարի հանդէպ անարդարացի քայլերի համար:

Մեզանում ժամանակն է վերջ դնելու սենսացիաներին: Այդ գործով զբաղուողներն արդէն ակնյայտօրէն իրար կրկնելուց այն կողմ չեն անցնում: Կայ մի ուղի միայն. դա բանասիրական խնդիրներից դէպի տեքստաբանական հետազոտութիւններին անցնելն է՝ զուտ տիպաբանական առանձնայատկութիւններ բացայայտելու ուղիով: Ժամանակին Ա. Զօպանեանը խիստ կարեւորում էր այդ գաղափարը. «Տաղաշարքերը, զոր 1897-ին Ս. Ղազարու թ. 1371 ձեռագրին մէջ գտայ, ունէ հեղինակի անուն չէին պարունակէր, բայց մեծ մասամբ անձնական տաղանդի մը, ինքնատիպ ու հայադրոշմ վարպետ աշուղի մը կնիք կը կրէին. երբ ատեն մը ետքը «Հայերգի» յառաջաբանին մէջ կարդացի այն քանի մը տողերը, ուր Արիստակէս.... կը յայտարարէ, թէ ...տաղաշարքը գործն է Նահապետ Քուլակ վարպետ աշուղին.... Կառչեցայ այդ անունին, որովհետեւ այն շարքերը, զոր գտած էի Վենետիկ եւ անոնք, զոր յետոյ գտայ Փարիզ եւ այլուր.... ապահովապէս գործ են նոյն բանաստեղծին, միակ մեծ աշուղի մը»²⁴: Բացի այս՝ նշանաւոր հայագէտ Ն. Ակինեանից ստանալով նրա գտած քուլակեան հայրենները հրատարակելու թոյլտուութիւն՝ նա դրանք 1902 թ. տպեց «Նահապետ Քուլակի Դիւանում», որտեղ պոետի բանաստեղծութիւնն աչքի է ընկնում ինքնատիպութեամբ, «ներշնչման մեծ թարմութեամբ.... ձեւի հեշտաւէտ գունագեղութեամբն ու արտակարգ սեղմութեամբը, շեշտի պաշտելի անկեղծութեամբն ու զօրութեամբը»²⁵: 20-րդ դ. 80-ականներին ակադեմիկոս Լ. Մկրտչեանն այն հաստատ համոզմունքն է յայտնում, որ քուլակեան իւրաքանչիւր հայրենում առկայ է ու կարեւոր հեղինակային կորիզը՝ միջուկը, որի շուրջ ձեւաւորուում է բանաստեղծի անշփոթելի աշխարհը:

Աշխատանքում այդ եւ այլ կարգի աղբբեջանական հարցերը պարզելով՝ պիտի ներկայացուեն ինչպէս բանաստեղծի կենսագրութիւնը, այնպէս էլ նրա կրթութեան ու դաստիարակութեան կարեւոր մանրամասները: Քուլակեան աւանդազրոյցների ուսումնասիրութիւնը տուել եւ դեռ կարող է տալ բանաստեղծի կեանքի ու կենսագրութեան ամբողջական պատկերն ունենալու հնարաւորութիւն: Այս գործում իր բացառիկ կարեւորութիւնն ունի յատկապէս «Նահապետ Քուլակի բանաստեղծական աշխարհը» (2001 թ.) ժողովածուն, որում ընդգրկուած են արժէքաւոր հանրագիտարանային նիւթեր եւ աւանդազրոյցների ամբողջական տեքստերը եւ քուլակեան ընտիր հայրենները²⁶:

Հանճարեղ բանաստեղծ-աշուղին նուիրուած աւանդազրոյցները մեզ են հասել մեծ մասամբ գրաւոր ճանապարհով՝ բացի երկու-երեք դէպքից (դեռ այդ մասին կը խօսուի): Իսկ միւս դէպքերում աւանդազրոյցների հեղինակները, այո՛, նրանք եւ ոչ

²³ Տե՛ս Մնացականեան Ա., Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջ, Երեւան, 1966: Տե՛ս նաեւ՝ Յարութիւնեան Բ., Հայոց արեւելից կողմերի եւ Աղուանի պատմութեան ու պատմական աշխարհագրութեան հարցեր, Երեւան, ԵՊՀ հր., 2016, էջ 297-319:

²⁴ Նահապետ Քուլակի բանաստեղծական աշխարհը, էջ 349:

²⁵ Նոյն տեղում, էջ 163:

²⁶ Նոյն տեղում, էջ 85-125:

ասացողները, հանդէս են գալիս իբրեւ նիւթը վերամշակողներ ու վերաշարադրողներ: Հետաքրքիր է եւ այն, որ մինչեւ Արիստակէս վ. Տեւկանցի «Հայերգի» լուսնածայումը (1882 թ.) շատ տարածուած ու սիրուած աւանդազրոյցները գրաւոր աղբիւրներում երեւան չեն եկել, սակայն նա դրանց մի մասը լսել է ժողովրդից: Հմուտ բնագրագէտը, դրանց կարեւորութիւնը գիտակցելով հանդերձ, խօսում է միայն բանասիրական խնդիրներից²⁷ այլ հնարաւորութիւն չունենալով:

Այսպիսով՝ մեզ հասած ներքոյիշեալ աւանդազրոյցները հանդէս են գալիս հետեւեալ ժամանակագրական հերթականութեամբ.

1. **Խրիմեան Հայրիկի պատմածը Ն. Քուչակի աշակերտ Մուշոյի մասին** (անդրագարձը «Պապիկ եւ թոռնիկում». 1894 թ.)²⁸.

2. **Յովհաննէս Թադէոսեանի՝ բանահաւաք Սարգիս Հայկունուց լսած աւանդազրոյցը**²⁹ (1902 թ.).

3. **Գէորգ Ասատուրի՝ Նահապետ Քուչակի մասին Խրիմեան Հայրիկից լսած զրոյցը՝** գրի առնուած 1904 թ. Դեկտեմբերի 10-ին³⁰ (տպագրուած՝ 1905 թ.).

4. **Սերինէի (Ս. Մ. Աւագեանի գրի առած աւանդազրոյցն Աշտարակի Հաղս (Աղծք) գիւղի բնակիչ, բանաստեղծի տոհմակից Փանոս Չիչակեանից 1940 թ.)**³¹.

5. **Աւետիս Ղուկասեանի ներկայացրած նիւթը, որի աղբիւրները յղուած չեն, սակայն վերապատմուած են իր կողմից** (1957 թ.)³².

6. **Նաիրի Զարեանի՝ իր մօրից լսած պատումը**³³ (1962թ.).

7. **Արամ Ղանալանեանի՝ Խրիմեան Հայրիկի եւ Գէորգ Ասատուրի գրառած նիւթերի հիման վրայ ներկայացրած աւանդազրոյցը** (1969 թ.)³⁴

8. **Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց մատենադարանի ձեռ. թ. 1760-ը, որում առկայ է աշուղական մի մրցութեան պատմութիւն:** Նրանում Բաղէշի խանի առջեւ Քուչակը եւ մի թուրք աշուղ մրցում են, եւ Նահապետը յաղթում է վերջինիս³⁵:

Եթէ մի կողմ թողնենք Խրիմեան Հայրիկի «Պապիկ եւ Թոռնիկ»-ի աշուղ Մուշոյի (Քուչակի ենթադրեալ աշակերտի) եւ առհասարակ աշուղների սովորութիւնների մասին հատուածը, ինչպէս եւ Գէորգ Ասատուրի գրի առածը³⁶, Սերինէի «Իմ երկրային ուղին» երկի դրուագը³⁷, որ աւանդազրոյցի համառօտ յիշատակումն է, ապա բուն

²⁷ Տեւկանց Ար., Հայերգ, մեղեդիք, տաղք եւ երգք, Թիֆլիս, 1882, էջ ԺԲ:

²⁸ Խրիմեան Հայրիկ, Երկեր («Պապիկ եւ թոռնիկ») Երեւան, ԵՊՀ հր., 1992, էջ 146-152 (Երկը տպուել է 1894 թ. Մայր Աթոռի տպարանում): Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 85-91: Վազգէն Առաքինը հետաքրքիր տեսակէտներ է յայտնում Խրիմեան Հայրիկի «Պապիկ եւ թոռնիկ»-ի մասին: Տե՛ս ՎԱԶԳԷՆ Ա ԱՐԱՔԻՆ, Գալիֆի տեսիլով (ուսումն., յօդուած., ուղեգրութիւններ (1943 թ.) ուսումնասիրութեան մասին է:

²⁹ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 97-98:

³⁰ Նոյն տեղում, էջ 92-96:

³¹ Նոյն տեղում, էջ 99-112: Սերինէն իր «Հազարան բլրով» պոէմի նախերգանքում եւս անդրադարձ է կատարում փուլական աւանդազրոյցին: Նոյն տեղում, էջ 113-114:

³² Տե՛ս Ղուկասեան Ա., Մեծ հումանիստ ֆնարեղուն, Հայրենի կարգաւ, Երեւան, 1957, էջ 3-5: Նաեւ՝ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 621:

³³ Նոյն տեղում, էջ 117-125: Զարեան Ն., Երկրորդ կեանք. ինքնապատում, Երեւան, 1962, էջ 167-175:

³⁴ Ղանալանյան Ա., Աւանդապատում, էջ 274, 471: Նաեւ՝ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 116:

³⁵ Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (աշխ. Հ. Սահակեանի), հ. 1, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հր., 1986, էջ 681:

³⁶ Նոյն տեղում, էջ 94:

³⁷ Նոյն տեղում, էջ 111-112:

զրուցապատումներն իրենց կարճ եւ ընդարձակ տարբերակներով վերաբերում են կենսագրական նիւթին եւ լրացնում իրար³⁸ բաժանելով երկու խմբի.

1. Ժողովրդական-բանահիւսական

2. Հեղինակային մշակման ճանապարհով գրաւոր աւանդուած աւանդագրոյցներ, որոնք անտարակոյս ունեցել են իրենց ժողովրդական-բանահիւսական նախօրինակները եւ յետոյ գրի առնուել կամ մշակուել:

Առաջին խմբին է պատկանում Գէորգ Ասատուրի 1904 թ. Դեկտեմբերի 10-ին Խըրիմեան Հայրիկից գրի առածն աշուղ Քուշակի, ինչպէս եւ հարեւան գիւղ հարսանիք գնալու, գայլերի հանդիպելու, Ս. Թադէոսոս (նաեւ՝ Թադէոս) վանքի տանիքը ելնել-ընկնելու, Բաղէշում թուրք աշուղին յաղթելու, գերեզմանի՝ ուխտատեղի լինելու զրուցապատումներով³⁹: Այս խմբի աւանդագրոյցներից ամենակարեւորը բանահաւաք եւ բանաստեղծ Սերինէի (Ս. Մ. Աւագեանի) պատումն է՝ «Քուշակեան աւանդավէպ» վերնագրով: Գրի է առնուած 1940 թուականին, ասացող՝ Փանոս Զիչագեան⁴⁰: Քանի որ Սարգիս Հայկունու նիւթը Յովհաննէս Թադէոսեանի համառօտ վերապատմումով է աւանդուած ու ամենաառաջիններից մէկն է⁴¹, սակայն չի կարող դրուել այս բաժնում, մինչեւ որ բնօրինակը չյայտնաբերուի: Կարելի է ասել, որ բանասէրների մեծ մասը նախապէս Գէորգ Ասատուրից են քաղել իրենց տեղեկութիւնները, դա վերաբերում է նաեւ Արամ Ղանալանեանին, քանի որ Սերինէի «Քուշակեան աւանդավէպը» լոյս է տեսել 1978 թ. եւ մինչ այդ յայտնի չի եղել բանասէրներին⁴²: Մուշոյի մասին Խրիմեան Հայրիկի պատմածը, ըստ Գէորգ Ասատուրի, իրական անձնաւորութեան չի վերաբերում, այլ անուանափոխուած մի հերոսի մասին է, որն անձնաւորում է Նահապետ Քուշակին⁴³:

Երկրորդ խմբի մէջ կարելի է ներառել Յովհ. Թադէոսեանի «Մի աւանդութիւն»-ը (1902 թ.)⁴⁴ եւ Ն. Զարեանի «Քուշակ Նահապետի աւանդութիւնը» (1962 թ.)⁴⁵, որոնք հեղինակային մշակումներ են: Յովհ. Թադէոսեանը գրում է. «Այս պատմութիւնը ինձ պատմեց Պ. Ս. Հայկունին»⁴⁶: Նիւթը ժամանակին ուղարկուել է Մոսկուայ՝ «Էմինեան ազգագրական հանդէսում» տպագրութեան, բայց մնացել է անտիպ: Յուսանք, որ տեքստը կարող է յետագայում յայտնաբերուել եւ էական նշանակութիւն ունենալ քուշակագիտութեան մէջ: Ն. Զարեանը նիւթը մանուկ հասակում է լսել մօրից, իսկ տեքստը շարադրել ու հրատարակել է 1962 թ., եւ ինչպէս տեսնում ենք, սա էլ, ընդարձակ պատում լինելով հանդերձ, բաւականին ուշ է գրուած եւ շրջանառու:

Պահպանուած աւանդագրոյցներից առաւել կարելորդ Սերինէի պատումն է, որը, ինչպէս արդէն նշուեց, անմիջապէս հմուտ ասացողից է գրի առնուած՝ Փանոս Զիչագեանից, որը Քուշակի (Զիչագի) թոռներից է եւ պատմելիս յաճախ է գործածում մեր տունը, մեր արտը ընտանի արտայայտչաձեւերը: Շատ հետաքրքրական ու կարելորդ է

³⁸ Խօսքը Յովհ. Թադէոսեանի (էջ 97), Սերինէի (Ս. Մ. Աւագեան, էջ 99), Ն. Զարեանի (էջ 118) եւ մասամբ էլ Ա. Ղանալանեանի (էջ 116) համառօտ պատումների մասին է:

³⁹ Նոյն տեղում, էջ 94:

⁴⁰ Նոյն տեղում, էջ 99-110:

⁴¹ Նոյն տեղում, էջ 97-98:

⁴² Քուշակեան աւանդավէպ, Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, ք. 8, Երեւան, 1978, էջ 101-106:

⁴³ Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխատքը, էջ 94:

⁴⁴ Թադէոսեան Յովհ., Քուշակ Նահապետի երգերի մի նոր հրատարակութեան առթիւ, Արարատ, Վաղարշապատ, 1902, էջ 1151:

⁴⁵ Զարեան Ն., Քուշակ Նահապետի աւանդութիւնը, էջ 167-175:

⁴⁶ Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխատքը, էջ 98 (տողատակ):

եղել բանագէտ Ս. Հայկունու պատումը եւս, որը նա «քաղել է ժողովրդական կենդանի աղբիւրից», այսինքն՝ գրի է առել ասացողից: Յովհ. Թադէոսեանը վկայում է, որ Հայկունին երկը «յիշում էր մօտաւորապէս. բուն նիւթը ժողովրդական բարբառով (էր): ...Պատմութեան մէջ եղած թէ՛ հանելուկը, թէ՛ սուլթանի աշուղների եւ թէ՛ Չիչակի երգերը տաճկերէն էին»⁴⁷: Ինչպէս երեւում է, այն իր դիպաշարով մօտ է եղել Սերինէի պատումին, յօրինուած է եղել ժողովրդական ոգով ու ունեցել է հանելուկը՝ յօրինուած թուրքերէն:

* * *

Արդէն վեց-եօթ տարեկան հասակում հայ մանուկներն⁴⁸ ինչպէս այլ վայրերում, այնպէս էլ թերեւս Խառակոնիսում յաճախում էին հանրային նախակրթարաններ (տարրական) կամ վանական դպրոցներ: Այդ մասին խօսում է եւ Ն. Զարեանը: Հաւանաբար մինչեւ մեծ եղեռնը Խառակոնիսի գործող դպրոցը 16-րդ դարում դժուար թէ չգործեր եւ Ն. Զարեանի վարժապետ Պ. Անդրէասի պէս խորագէտ ուսուցիչներ աշակերտներին գրել-կարդալ, Ս. Գիրք, վայելչագրութիւն, երգեցողութիւն, թուաբանութիւն եւ տոմարական տարրական գիտելիքներ շտային⁴⁹: Մեր համոզմամբ՝ այդ դպրոցի սաներից է եղել նաեւ Նահապետ Քուչակը: Մինչև Ս. Կարապետի վանքում սովորելը նա ձեւաւորում է որպէս հետաքրքիր մարդ եւ աշուղ: Մանաւանդ նրա կեանքի այս կողմը շատ կարեւոր է:

Աւանդազրոյցներում խառակոնիսցի Քուչակը նախ Արճակ գիւղի Մարտոյի տան խաչքաւորն է: Պատանի հասակում գնում է Արճակ քաւորութիւն անելու⁵⁰: Կընքաճաշին հիւրերից մէկը տանը գոչում է՝ գառալէժ⁵¹ (Ն. Զարեանի պատումում դա տեղի է ունենում ձիթհանքում): Նախոն (համագիւղացիներն այսպէս են կոչել նրան) ընկնում է դժուարին դրութեան մէջ. չի կարողանում խաղ ասել եւ արժանանում է ծաղրածանակի, նեղացած դուրս գալիս գառալէժի տեղից ու քուն մտնում տանը կից խնձորի այգում: Նրան է յայտնւում երազի ձիւտորը (Արճակ լճի հրեղէն մարդը կամ շնորհապարգեւ սուրբը⁵²) եւ ոսկի թասից ջուր տալիս տղային՝ անուանելով նրան աշուղ Չիչագ, ու պատուիրում կրկին հետ գնալ ու իր տաղն ասել հաւաքատեղիում: Ն. Զարեանի պատումում Նախոյին ջուր է տալիս ձիթհանի տիրոջ աղջիկը՝ Թանկ/գ/ խաթունը՝ Քուչակի ապագայ կինը⁵³: Պատումներում Թոռ Քուչակի կնոջ անունը ժամանակի ընթացքում, հաւանաբար սխալմամբ, վերագրուել է Պապ Քուչակի կնոջը: Այդ շփոթը պարզում է գրիչ Ստեփանոս Զուղայեցու ձեռագիր Աւետարանում թողած

⁴⁷ Թադէոսեան Յովհ., Քուչակ Նահապետի երգերի մի նոր հրատարակութեան առթիւ, Արարատ, Վաղարշապատ, 1902, էջ 1151:

⁴⁸ Զուհարեան Թ., Հայ գրականութեան մեթոդիկայ, Երեւան, ԵՊՀ հր., 1980, էջ 13:

⁴⁹ Նոյն տեղում, 18-19: Քուչակը թէ՛ հայ, թէ՛ թուրք հասարակութեան մէջ սիրուած երաժիշտ-կատարող է եղել, ստեղծագործել է եւ թուրքերէն՝ /այսինքն՝ երկու լեզուով/ իր ժամանակակից աշուղների պէս տիրապետելով նաեւ թուրքերէնին:

⁵⁰ Տե՛ս Յովսէփեան Գ., Զագաւանից ժողովը, Շողակաթ, 1913, թ. Ա, էջ 43: Նաեւ՝ Զագաւանքի (Գետարգելի) ժողովը եւ իր Կանոնքը, հայ աստուածաբան (Գիտական յօդուածների ժողովածու), թ. Ե, Երեւան, ԵՊՀ հր., 2013, էջ 99:

⁵¹ Գառալէժ-Վանում եւ Վասպուրականում տարածուած էր մի սովորութիւն՝ ըստ որի, մեծից փոքր, առանց դիրքի խտրութեան, պիտի մասնակցէին երգի մրցութեանը, որը յայտարարում էր «գառալէժ» բառի արտաբերումով: Տան կամ շինութեան դուռն անմիջապէս փակում էր, եւ ներսում մնացածներից ոչ ոք չէր կարող խուսափել մասնակցութիւնից: Յաղթողին մեծարում էին, նուէրներ տալիս:

⁵² Շրջակայ գիւղերում կարծում էին, թէ լճի հատակում է բնակւում շնորհապարգեւ սուրբը:

⁵³ Նոյն տեղում, էջ 116, 128: Պապ եւ Թոռ Քուչակներն ու նրանց գերեզմաններն յաճախ շփոթուած են:

յիշատակարանի հաղորդումից⁵⁴, որում այդ անունը Թոռ Քուչակի կնոջ անունն է: Իսկ աղջիկը Ն. Զարեանի պատումում Քուչակին սովորեցնում է, որ երբ իր հայրը հարցնի, թե ինչպես ինքը փոխհատուցի նրա սքանչելի տաղերի կատարման դիմաց, նա թող իր ձեռքը խնդրի: Այդպես էլ լինում է, եւ նշանդրեքից մի ամիս անց տեղի է ունենում նրանց ամուսնութիւնը:

Սերինէի պատումում տղան երազում հասնում է մինչեւ **Պազում Խաչեր** կոչուած սրբավայրը, բռունցքի հարուածով մի գամ է խփում խաչքարի վրայ եւ արթնանում: Զարմանում է, որ ինքը քնել է **Ֆռանգիլի** (հարեւանի) այգում, բայց երազի ձիաւորի հետ հասել է **Պազում Խաչեր** ու արթնացել այնտեղ (դա հաստատւում է գամի իրական լինելու հանգամանքով): Նա վերադառնում է եւ այս անգամ երգում ու զարմացնում բոլորին՝ յօրինելով հետեւեալ տաղը.

**Աշղ Չիչազ Խառակոնսա,
Կյովամ պարի լուսն, կյովամ,
Խուռնի ծիյաւոր Առնակ տիսա,
Մեռնեմ պացուող պարի լուսուն:
Պազում խաչեր, քյու տուռ խասա,
Ծունդր եմ զարկէ պարի լուսուն⁵⁵:**

Արճակից Ն. Քուչակը վերադառնում է տուն: Հասկանալով, որ ստացած շնորհը աստուածային պարգեւ է, նա որոշում է լինել հայերիս համար շնորհապարգեւ Ս. Կարապետի սրբարանում՝ յայտնելու իր շնորհակալութիւնը աշուղների հովանաւոր սրբին⁵⁶: Հրաժեշտ է տալիս ծնողներին եւ իր կոյր քրոջը՝ **Նունուֆարին** (ըստ Ն. Զարեանի պատումի): Ծնողները տղային են նուիրում իրենց «բող (Ֆ)որթնկան» (գորշ հորթը)⁵⁷, որին հեծած՝ Քուչակը յետագայում շրջում է ամենուր: Հէնց նրան նստած՝ նա գնում է նաեւ Ս. Կարապետ ու մնում: Պարզւում է՝ քոյրն էլ է երազ տեսել, թէ ինչպէս Արճակից եկած ձիաւորը ոսկէ թասով ջուր է տալիս նույն հորթին և **Չիչազի ձի** անուանում: Իր «երազի ճամբարի»-ը վերջանում է 10-ամեայ բացակայութեամբ: Նա մեկնում է Ս. Կարապետ. «Սըփ Կարապետ... աշղը **Չիչազին կրապառ կիրկալամի էլ շնոխքյ տուած կըլնի**. համ էլ **թիւթանքի շնոխքյ** (դիւթանքի շնորհք- Ս. Մ.)»⁵⁸: Իրականում նա այստեղ գրաբար գրել-կարդալ եւ այլ գիտելիքներ է ձեռք բերում: Աւանդազրոյցներում ուսումնառութեան տարիների մասին այլ մանրամասներ չեն

⁵⁴ Հայերէն ձեռագրերի ԺԵ դարի յիշատակարաններ, հ. Բ, Երեւան, 1878, էջ 715-716: Պարզում է, որ Թոռ Քուչակը, յարգելով պապի յիշատակը, Աւետարանը նուիրել է Խառակոնիսի «Ս. Թէոդորոս զօրավար» վանքին՝ նշելով.

«Փառք Քուչակ անուն բարի մտական,
Որ ստացող եղև տրան:

Յիշեցէք գ-Քուչակ եւ միւս կենակից Թանգխաթունն: Դարձեալ յիշեցէք գ-Քուչակ եւ զմեծ պապն իւր՝ Նահապետ վարպետն, որ մականուն Աշղը Քուչակ ասի»: Քուչակի հայրենակից Ն. Զարեանն իր Աւանդազրոյցում բերում է Խառակոնիսի Ս. Թէոդորոս վանքի բակում գտնուող Թոռ Քուչակի գերեզմանի վրայ եղած իր ուսուցիչ պարոն Անդրէասի վերձանած տեքստը. «**ՔՈՒՉԱԿ ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ԿՈՂԱԿԻՅՆ ՆՈՐԱԿ ԹԱՆԿԵՍԹՈՒՆ**»: Մինչդեռ Պապ Քուչակի գերեզմանի գրոյթինը նոյն գերեզմանոցում այսպիսին է. «**ՍԱ Է ԱՐԵՒ ԲՈՒՉԱԿ ԹՎ ՌԻՍԱ ձգ-ՔՍ**» /1041+551=1592 թիւ/: Գիտնականները կարծում են, որ գրուածքն աղաաղուել է ժամանակի ընթացքում. այն կարող է ոչ թէ **ԱՐԵՒ**, այլ Նահ (ապետ) լինել: Տէն Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 128:

⁵⁵ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 100:

⁵⁶ Շնորհապարգեւութեան հարցի մասին տէն Մխիթարեան Ս., 10-11-րդ դարերի հայ մշակութային դաշտը..., Երեւան, ԵՊՀ հր., 2009, էջ 316-321:

⁵⁷ Տէն Աղայեան Է., Արդի հայերէնի բացատրական բառարան, հ. Ա, Երեւան, 1976, էջ 198:

⁵⁸ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 102:

պատմում, բայց պարզ է, որ նա հմտանում է ժամանակի համար պահանջուած գիտութիւնների մէջ: Դրա հետ մեկտեղ՝ նա օժտուած է նաեւ այլ հմտութիւններով ու շնորհներով: Ն. Զարեանի պատմումում նա «հիւանդութիւններ է բուժում, վերքեր է լաւացնում, թախիժ փարատում»⁵⁹: Այդպիսի կարողութիւններով օժտուած լինելով, ինչը հաստատում է նաեւ սուլթանի մանկանը բուժելիս⁶⁰, նա կատարելագործում է իր գիտելիքները եւ գրել-կարդալու ասպարէզում: Այդ ամբողջ շնորհները նախ եւ առաջ պայմանաւորուած են երգելու եւ նուագելու աստուածային կարողութեամբ, բայց չէ՞ որ աշուղը նաեւ տեքստ ու երգի մեղեդին յօրինող մէկն է: Քուչակի մասին խորմեան Հայրիկն ասում է, որ «Գիւղացի ծերունիները կը պատմեն, թէ զուարճաբան մարդ մը եղած է Քուչակ: Մօտակայ գիւղերէն կը կանչեն եղեր զինքը հարսանիք» (Գէորգ Ասատուր)⁶¹: Եւ գիւղ չհասած՝ նրան շրջապատում են գայլերը: Բայց հնարամիտ աշուղն սկսում է նուագել իր քեման (լարային գործիք): Ինչպէս մարդիկ, որ հմայւում էին աշուղի երգերով, այնպէս էլ գայլերը նստում են հեռու ու լսում են նրա նուագը, մինչ գիւղացիներն օգնութեան են հասնում եւ վտանգից փրկում աշուղին:

Արդէն ուսումնաւորած աշուղը տուն է վերադարձել, պսակուել է, դարձել «չիժ-պժի տէր: Համ ռենջբարութեն կանի, համ աշղութեն: ...Սըփ Կարապետից պիրած դաֆթար ծոց տրած, սազ թել թալած»⁶² ուխտատեղերն է ման գալիս: Ուշագրաւ է այն, որ աշուղը ուսման վայրից բերած իր թանկ դափթարից այլեւս չի բաժանւում: Մի՞թէ այս գաւթարն են փնտռում բանասէրները: Երեւի թէ՛ այո՛:

Մի անգամ Քուչակը ջրում է իր արտը, երբ Ստամբուլից գալիս են սուլթան Մուրատի ենիչերիները եւ յայտնում աշուղին, որ տիրակալը շտապ պալատ է կանչում նրան: Թագուհու կուրծքը քարացել էր, եւ նորածին երեխան սովից կը մեռներ, եթէ մի ճար չարուէր: Աշուղը, իր գորշ եզանը հեծած, գնում է մայրաքաղաք: Բանդի-Մահու գետի մօտ հօտաղները կամրջին նստած. «Որ Զիչագին կտիսնան, կիսաշինած չարխներ կըպոնեն ծեռքըներ, խաղալով կուկեան՝ առաճ կըպոնեն, տաճկերէն տաղ ասելով խանելուկ կ'ասեն».

Աշղ Զիչագ խեծէ բոզին

Մէկ ասպածն ի, մէկ ինքն,

Էն վիրն ի՛ մէյ քիթ կայ, քառսուն աչկ....

Զիչագ չի կանա էտը խանելուկ խանի: Աշղական աղաթով էլ օրէնք չկայ, որ թողնի ընցնի»⁶³: Հօտաղների առաջադրած հանելուկը չլուծելու պատճառով նա հետ է վերադառնում տուն եւ փաստօրէն ուշանում էր: Բայց քրոջ օգնութեամբ աշուղը լուծում է հանելուկը (որ չարուխի մասին էր), անցնում գետի կամուրջը եւ շտապում է Ստամբուլ: Սերինէի այս նոյն պատմումում աշուղի կոյր քոյրը նաեւ եղբօրը զգուշացնում է, որ հարեմի ջահել կանանց, իր սովորութեան համաձայն, աչքով-ունքով չանի, շոռաչք չլինի ու փորձանքի մէջ չընկնի: Այդ պատճառով էլ նա պահանջում է՝ իր աչքերը կապեն, ու նոր մտնում է սուլթանի կանանոցը: Պալատում նա վարագոյրի հետեւից հրաշալի երգում-նուագում է թագուհու համար, վերացնում պալատի վրայ եղած կախարդանքը եւ բուժում հիւանդութիւնը՝ իր աստուածապարգեւ երգով ու նուագով:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 119:

⁶⁰ Ս. Գր. Նարեկացիի Յովն. Մկրտչին /Կարապետին/ համարում է մարգարէ եւ միաժամանակ առաքեալ: Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր եւ գանձեր, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, էջ 141:

⁶¹ Նոյն տեղում, էջ 94:

⁶² Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 102:

⁶³ Նոյն տեղում, էջ 103:

Պառաւ նաժիշտը հիացմունքով շնորհատրում է Քուչակին՝ ասելով. «Աչքդ լոյս, Քուչակ Նահապետ, քո խաղերով դու թագուհու աչքից արցունք հանեցիր, ստինքներից՝ կաթ»⁶⁴: Սակայն բոլոր պատումներում էլ տարբեր պալատականներ (եւ մանաւանդ վեզիրը) նախանձից չարախօսում են Քուչակին սուլթանի առաջ, բայց նա սրամտօրէն դուրս է պրծնում սրանց լարած թակարդներից եւ ստանում թոյլտուութիւն՝ արտօնել իրեն՝ իր երգերը 20 օր Ստամբուլում կատարելու⁶⁵: Աշուղը, եօթ եկեղեցի, եօթ մզկիթ եւ եօթ կամուրջ շինելու թոյլտուութիւնն ու գումարը սուլթանից անձամբ ստացած՝ իր վերադարձի ճանապարհին կառուցում է դրանք: Վերջին եկեղեցին Խառակոնիսում գտնուող Ս. Թէոդորոս (Թադէոս) վանքն է: Սերինէի պատումում Քուչակը հէնց իր արդար ձեռքով է կառուցում այն, բարձրացնում եկեղեցու գմբէթը եւ խաչը դնում վրան: Աստծու հրամանով հրեշտակներն իջեցնում են նրան գետին (որոշ պատումներում ընկնում է), եւ Քուչակը նրանց իր մահուան ժամանակն է հարցնում, իմանում ու կրկին զբաղւում իր գործերով: Ապրում է մինչեւ հարիւր տարեկան հասակը: Ունենում է ժառանգներ, որոնց մասին աւանդազրոյցները կոնկրետ տեղեկութիւններ չեն տալիս: Յայտնի է, սակայն, որ օրինակ **Փանոս Չիչազեանը** Չիչակի զարմից է: Ընդհանրապէս Չիչակեանները Քուչակի սերունդներն են: Իսկ արդէն գրիչ Ստ. Զուղայեցու ձեռագիր Աւետարանի յիշատակարանից իմանում ենք Թոռ Քուչակի մասին:

Աւանդազրոյցներն, այսպիսով, տալիս են բանաստեղծի կեանքի հետեւեալ դրվագները.

1. Հիւր (ձիթհանք կամ ջրաղաց) գնալը եւ «դուլուն» (շնորհապարգեւ հեղուկը) խմելն ու 14 տարեկանում յայտնի դառնալը աշուղական ասպարէզում.

2. Ս. Կարապետ կատարած ուխտագնացութիւնը, այնտեղ մնալը՝ ուսանելու նըպատակով եւ նոր շնորհներ ստանալը, գաւթաբը հետը տուն վերադառնալը.

3. Մինչ Ստամբուլ կանչուելը կամ դրանից տարիներ անց հարսանիքների մասնակցելը, **գայլերին երգ ու նուագով հմայելն ու փրկուելը եւ առաւել յայտնի դառնալը.**

4. Փորձութիւններ արքունիքում, երգով հիւանդութիւնը բուժելը, հմայանքը վերացնելը եւ շարամիտ զրպարտանքներից սրամտութեան շնորհիւ ազատուելը (վեզիրի եւ թուրք աշուղների խարդաւանքները յաղթահարելը).

5. Նաեւ խնդրանքը սուլթանին՝ Ստամբուլում իր երգերը 20 օր կատարելու եւ մինչեւ Խառակոնիս եօթական եկեղեցի, մզկիթ եւ կամուրջ կառուցելու թոյլտուութիւն ու ծախսն ստանալը.

6. Բաղէշում թուրք աշուղին յաղթելը բանակում: Ըստ թուրք աշուղի՝ սարը բարձրացող խոզն իբր քրիստոնեաների տէրտէրին է նման, ինչն ակնյայտ անարգանքի նշան էր, որին Քուչակը պատասխանում է, թէ այդ դէպքում նրան հետապնդող 10 շներն էլ մոլլաների են նման.

7. Խառակոնիսի Ս. Թէոդորոս (նաեւ՝ Թադէոս) վանքի կառուցումն իր ձեռքով կատարելու, օծումը եւ մահուանից յետոյ՝ սրբացումը (մահը, գերեզմանը Ս. Թէոդորոս վանքի բակում թաղուելը):

Այնուամենայնիւ, Նահապետ Քուչակի կեանքի վաղ շրջանը, ինչպէս եւ ուսումնառութեան տարիները մասնակի են արտացոլուել աւանդազրոյցների մէջ: Մեր կարծիքով՝ դա արդիւնք է թերեւս այն բանի, որ հիմնական ուշադրութիւնը դրանցում

⁶⁴ **Զարեան Ն.**, «Քուչակ Նահապետի աւանդութիւնը», էջ 171: Նաեւ՝ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 122:

⁶⁵ **Ղուկասեան Ա.**, Մեծ հովանիստ ֆնարերգուն, հայրենի կարգաւ, էջ 4:

բեւեռուած է եղել յատկապէս Խառակոնիսի Ս. Թէոդորոս վանքի կառուցման վրայ: Այդ պատճառով աւանդազրոյցները միտուած են տալու վանքի կառուցման պատմութիւնը՝ հերոսի կեանքի ինչ-ինչ կարեւոր մանրամասների հետ: Եւ համադրելով տեղեկութիւնները ձեռագրական յիշատակարանների, գերեզմանաքարերի վրայ եղած արձանագրութիւն էպիտաֆիաների եւ հեղինակային տաղերի հետ՝ մենք ստանում ենք բաւականին բազմաբնոյթ տեղեկութիւններ բանաստեղծի իրական կեանքի տարբեր շրջանների մասին:

Ուշագրաւ է այն խնդիրը, թէ ինչո՞ւ են հօտաղները Ստամպուլ մեկնելուց առաջ աշուղին այսօրինակ հանելուկ առաջարկում՝ **այն ինչն է՝ «սերսուփ տախտըկ ի՛ անջնջում ներկ ի.... կրվածքն էլ»⁶⁶ (Այն ինչն է, որ.... տախտակ է, անջնջում ներկ է, գրուածք է): Աւանդազրոյցի սրամիտ հերոսը պատասխանում է, թէ «Սերսուփ տախտակ որ կայ, էտը իմ կայիմ կողով դալթարն ի, որ սըլի Կարապետուց եմ պիրէ: Անջնջում ներկ որ կայ, էտը իմ չխամրող, խաս բոյա թանաքն ի: Կյրվածքներն էլ՝ իմ կրած տաղերն են»⁶⁷: Արդէն պարզ խօսւում է իր 1/դալթարի, 2/թանաքի եւ 3/տաղերի մասին, թէեւ պատասխանը վերաբերում է եւ մարդու ճակատագրին⁶⁸: Աւանդազրոյցի հերոս Քուշակը վերանում է հանելուկի այլաբանութիւնից եւ խօսում իրական առարկաների մասին՝ իր դալթարի, անջնջելի թանաքի ու անմահ տաղերի:**

* * *

Պահպանուել են նաեւ նրա թուրքերէն որոշ քառեակներ (մանիններ), ինչպէս եւ հայերէն մի շարք տաղեր: Փաստ, որ շատ մեծ կարեւորութիւն է ձեռք բերում: Զարմանալի բան, քուշակեան բանաստեղծական արուեստը փայլում է նաեւ տաղերգութեան մէջ: Տաղերից մէկն օրինակ իր կրօնական ուղղութեան պատճառով չի արժանացել ուսումնասիրողների պատշաճ ուշադրութեանը: Խօսքը «Գովասանք Աստուածածնի ումեմն գօսանէ՝ Քօշակ Վանեցոյ....» ստեղծագործութեան մասին է⁶⁹: Ապաշխարութեան թեմայով մի գեղեցիկ տաղ է դա, որում Քուշակը ցուցաբերում է կտակարանների փայլուն իմացութիւն, դրանց խորհրդանշանների քաջիմացութիւն: Ապաշխարութեան գիտակցման եւ մեղքի խոստովանութեան, յաւերժական կեանքի հանդէպ մեծ ձգտման եւ Աստուածածնի՝ մահկանացուների համար միջնորդ-բարեխօս լինելու փաստերի գիտակցումը վկայում են քրիստոնէական արժէքների կարեւորում բանաստեղծի կեանքում:

**Տուէք զողորմի եւ ասէք Հայր մեղան,
Աշըղ Քուշակին հոգուն միաբան,
Որ դուք ալ լինիք ողորմու արժան.... (62)**

Տաղն ամբողջովին գրուած է բարձր ներշնչանքով, բանաստեղծական խորաթափանցութեամբ, Աստուծոյ եւ Տիրամօր հանդէպ պատկառանքով ու սիրով:

Զարմանալի է, որ կեանքի իրական գեղեցկութիւնների սիրահար Քուշակը որդիական անմեղ զգացմունքներով կ'ուզենար երկրպագել Տիրամօրը՝ որպէս գեղեցկութեան կատարելատիպ կնոջ եւ մօր:

⁶⁶ Տե՛ս Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխարհը, էջ 104:

⁶⁷ Նոյն տեղում:

⁶⁸ Նոյն տեղում, էջ 101-102, 104:

⁶⁹ Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (աշխ. Հ. Սահակեանի), հ. 1, էջ 56-62: Տե՛ս ծան. էջ 587-588 (բնագիրը՝ ըստ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռ. ք. 1485, էջ 422-427):

**Ծոցդ է անմատոյց խորանի մման,
Գիրկդ սերովբէ կայ ի տարածման,
Միտք ոչ հասանէ զքեզ անհասական.
Մեղայ քեզ, մեղայ, կոյս անապական (59-60):**

Պատկերներն ու արտայայտչաձևերը հաստատում են տաղերի եւ հայրենների որոշակի կապը, ինչը եւս շատ կարեւոր է:

Աշուղը թուրքերէնով է յուզել սուլթանի կնոջ սիրտը: Արշալոյս Ղազինեանն իրաւացիօրէն պնդում է, որ Քուշակը հեղինակ է նաեւ թուրքերէն որոշ քառեակների⁷⁰, որոնց ձեռագրերը պահպանուել են: Այդպիսի աւանդոյթը հայկական աշուղական պոեզիայում այդ ժամանակներում տարածուած էր:

Հստ հայագէտ Հ. Բախչինեանի՝ 16-րդ դ. ամենանշանաւոր գուսան-աշուղը վանեցի Քուշակն է, որի անուամբ պահպանուել են մօտ 20 վարսաղներ (տաղերգի տեսակ): «Իր հայերէն ժառանգութեամբ Քուշակը աշուղ է... Քուշակի թուրքերէն երգերն ունեն տարբեր թեմատիկ-բովանդակային ընդգրկում (խոհա-խրատական, սիրային եւ այլն): Յատկանշելի է, որ այդ երգերը եւս հիմնականում հասցէագրուած են հայ լսարանին»⁷¹:

Սերինէի գրառած աւանդագրոյցում խօսուում է աշուղի գաւթաբէ մասին: Եւ ո՞վ է ասում, որ այդ գաւթաբէ չի եղել: Այն կարող է եւ մեր օրերում յայտնաբերուել, ինչպէս Սայաթ-Նովայինը՝ 19-րդ դարի կէսերին⁷²: Կասկած չկայ, որ դա գտնուել է Վարազայ վանքում, եւ Տեւկանցը տեսել ու օգտագործել է այն⁷³: Այս թանկ մասունքը, ցաւօք, ոչնչացել է Արիստակէս վ. Տեւկանցի հետ միասին 1895 թ. կոտորածի ժամանակ, երբ սպանուեցին միաբանութեան բոլոր անդամները, եւ այրուեց մօտ 10 հազար մեծարժեք ձեռագիր⁷⁴: Իսկ եթէ հրաշքով այն պահպանուած լինի, ապա անպայման երեւան կը գայ: Տեւկանցը «Այս ծովական գիշերս ի բուն» հայրենը (98 միաւոր) վերցրել է Մ. Մ. 1583 թ. ձեռագրից, իսկ 2-րդ ձեռագիրը 1646 թ. ձեռագիր Աւետարանն է, որ Թոռ Քուշակը նուիրել է Ս. Թադէոս վանքին: Շատ դիպուկ է Հ. Ս. Թամրազեանի նկատումը. «Դժուար է ասել, թէ որտեղ են սոյն ձեռագրերը: ... Սակայն մի բան անվիճելի է. Տեւկանցը չէր կարող այդքան բան յօրինել,- այնուհետեւ շեշտում է,- Մ. Արեղեանը եւ Աս. Մնացականեանը Տեւկանցին վերագրել են մի մեղք, որը նա չի ունեցել»⁷⁵: Նա «Հայերգում» 16 անուն երկասիրութիւններ եւ գրքեր է յիշատակում, որոնք ինքը հաւաքել է հրատարակութեան համար: Աւա՛ղ, այդ ամէնը եւս ի չիք են դարձել իր հետ միասին⁷⁶: Սեդրակ Տեւկանցը 1902 թ. Ար. Զօպանեանի մի հարցումին պատասխանում է. «Քուշակի մասին, ինչպէս եւ իր գործերուն մասնաւոր կարծիքներ ունիմ ... Եղբօրս՝ Արիստակէս վարդապետի նահատակութեան ժամուն

⁷⁰ Ղազինեան Ար., Նահապետ Քուշակի մասին յիշատակարանը, Գարուն, էջ 88:

⁷¹ Բախչինեան Հ., Հայ աշուղութեան սկզբնատրումը եւ կայացումը, Հանդէս ամսօրեայ, 2019, ք. 1-12, էջ 17-18:

⁷² Մխիթարեան Ս., Նահապետ Քուշակի խնդիրն արդի բանասիրական գնահատականներում, Գրական թերթ, ք. 42/2917/ 14 դեկ. 2007, էջ 3. Նոյնը՝ ք. 43/2918/21 դեկ. 2007:

⁷³ Տե՛ս Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխարհը, էջ 21-22:

⁷⁴ Տե՛ս Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխարհը, էջ 196: Սեդրակ Տեւկանցը Ա. Զօպանեանին բացատրութիւններ է տուել այդ մասին: Յաւօք, համահեղինակներս նախապէս կարծում էինք, թէ նմանկը գրել է Արիստակէսը՝ հրաշքով կենդանի մնալով, սակայն կրկին պարզուեց, որ նա եւ միաբանութեան որեւէ անդամ չի փրկուել: Պահպանուած 2 նամակները պէտք է համարել Սեդրակ Տեւկանցին, որն այդ ժամանակ ապրում էր Լոնդոնում:

⁷⁵ Տե՛ս Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխարհը, էջ 19, 22:

⁷⁶ Նահապետ Քուշակի բանաստեղծական աշխարհը, էջ 135-136:

(1895 թ. Վարազավանքի կոտորածի ժամանակ - Ս. Մ.) ջնջեցին նաեւ իրեն եւ միւս եղբորս՝ **Երեմիա** վարդապետի տարիներու շարաշար աշխատութիւն եւ հաւաքածոյ հատորներ»⁷⁷։ Ար. Տեւկանցը «Հայերգում», իսկ Սեդ. Տեւկանցն իր նամակում խօսում են հաւաքածոյ հատորների ու դրանց թուրքական վայրագ ոչնչացման մասին։ Իսկ տաղարան-դաւթարը մի կաթիլ էր այդ մեծ ծովում⁷⁸, որ գնաց լրացնելու հայոց ողբերգութեան ու անկումների վիթխարակուտակ շարքը։ Այս ամէնում մի կարեւոր դէմք է Փիրղալամեանը՝ Արիստակէսի հետ ձեռագրերի յիշատակարաններ հաւաքած գիտնական-կրօնաւորը։ Ձեռագրերն ու դրանց յիշատակարանները հաւաքող այս զոյգ մարդիկ թերեւս միասին են գտել Քուչակի անունը եւ նրա մասին կենսագրական տեղեկութիւնները։ Ուզում եմ ասել, որ Տեւկանցը միայնակ չի եղել իր որոշումներում, եւ Քուչակ անունն ընտրութիւնը երկուսինն է։

Այստեղ ուղղակի չենք կարող մանրամասն խօսել (երեւի թէ տեղին էլ չէ) թուրքական ահաւոր բարբարոսութիւնների մասին, որոնց հետեւանքը հայ կրօնա-մշակութային օճախների աւերումը, հրդեհումը, թալանը եւ ոչնչացումը եղաւ։ Վերջերս ինձ կրկին ապշեցրեց մի խոստովանութիւն, որ անում է 20-րդ դ. 10-ականների ինքնատիպ մի արուեստագէտ՝ եղեռնի զոհ դարձած Տիգրան Չէօկիրեանը՝ Թուրքիայի մասին գրելով. «Ա՛հ դժոխային երկիր, ուր սիրտը երբեք պիտի չտեսնէ արդար զգացումներու ծիլն ու միտքը՝ ինք իր մէջ անգամ ... ես կը սոսկամ տաճիկէն ու մանաւանդ իր արդարութէնէն...» / «Վանքը» վէպ, Փարիզ, 1933/։

Ու թէ ինչ սոսկում եւ ցաւ են ապրել եաթաղանի բերանն ընկածները, միայն իրենց է յայտնի։ Եւ արդիւնքում մենք՝ հայութեան բեկորներս, այդ մշակութային գանձերը ձեռք բերելու կամ դրանք մասնակիօրէն օգտագործելու նոյնիսկ տարրական հնարաւորութիւններից վաղուց զրկուած ենք։ Իսկ գիտնական-կրօնաւորների, մտաւորականութեան եւ վերջապէս անգէն ժողովրդի կոտորածներն ու տեղահանութիւնները նախկինում մեզ հիմա կանգնեցրել են ծանր փաստի եւ ծանրագոյն մտորումների առջեւ։ Ինչպէս 1895 թ. Տեւկանցն է դաժան եաթաղանի զոհ դարձել, այնպէս էլ Խառակոնիսն է գերուել, ու մեզ ոչինչ անել հնարաւոր չէ՝ բանաստեղծի մասին նիւթական մասունքներ ձեռք բերելու իմաստով։ Թուրքական մերժողականութեան արդիւնքում ամէն ինչ դատապարտուած է կործանման ու մոռացութեան։ Քուչակեան առեղծուածն այս ամէնի մի փոքր մասն է ընդամէնը՝ խառն ու խճճուած։

Հայագէտ **Նորայր Բիւզանդացու**՝ քուչակագիտութեան ասպարէզում մեծ ներդրում ունենալու մասին քչերը գիտեն։ Նրա «Նահապետ Քուչակ» աշխատութիւնը ծանօթագրութիւններով եւ առաջաբանով, ինչպէս եւ հայրենների ընտիր օրինակներով հանդերձ անտիպ վիճակում է։ Յայտնի չէ այդ երկի յետագայ ճակատագիրը⁷⁹. պահպանուե՞լ է այն, թէ՞ անհետ կորել քուչակեան դաւթարի պէս։ Նորայրը ժամանակին Ա. Չօպանեանին գրում է «Խորհուրդ կու տամ ձեզ երթալ ի Միլան եւ յԱմբրիոսիոսն մատենադարանի գրատնէն տեղեկանալ՝ թէ ինչ եղած են Ֆ. Ռիվոլայի ձեռագիրներն՝ հետ նորա մահուան։ Ֆ. Ռիվոլայի եւ իւր հայ (վանցի) գործակիցներն ապահովապէս ունեցած են ձեռին Նահապետի տաղերուն օրինակ մի»⁸⁰։ Սա միանգամայն ճիշդ է, եւ

⁷⁷ Տեւկանց Ս., Նամակ Արշակ Չօպանեանին, եղ. Չարենցի անուան ԳԱԹ, Արշակ Չօպանեանի ֆոնդ, ք. 6958-67։ Նախապէս սխալմամբ նամակը համարուել է Արիստակէսինը, որ այդ ժամանակ այլեւս չկար, մինչդեռ դա Սեդրակիւնն է։

⁷⁸ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 196, 243։

⁷⁹ Տե՛ս նոյն տեղում, էջ 276. **Ներսէս Ալիմեանի** նամակի պատասխանը. «Յուսահատ եմ բոլորովին, ուստի՞ պիտի հայթայթեմ գծախա առաջնոյն (Հայերէն բառգրի - Ս. Մ.) ...», իսկ **Նահապետի** տաղքն յոյս ունիմ, որ հրատարակուին, ծանր աշխատութիւն է, եւ ես ձերացել եմ, անոյժ եւ անօգնական /եմ/»։

⁸⁰ Տե՛ս նոյն տեղում, էջ 245։

հնարաւոր է, որ շատ կարեւոր մանրամասներ բացայայտուեն նաեւ այդ ստուգումների արդիւնքում:

Իսկ Աւ. Ղուկասեանն էլ իր հերթին յայտնում է, թէ **Մատղավանք** գիւղի աշուղ **Յակոբն** ասել է, որ իր վարպետ **Տալիպից** է սովորել Քուչակի երգերը: Ինչպէս.

**«Երէկ գիշեր ի երազ տեսա զիմ յարն անուշիկ,
Որ եկեր կրծքիս ընկէր, պագներ իմ թուխ երեսիկ,
Գլխիկս վերցի ի բարձէն, որ պագնեմ զիւր կաթ թշիկ,
Եղունկ, զիմ լալա յար, հաւքս թռաւ ի յերթիկ»⁸¹:**

Սքանչելի այս հայրենը վկայում է, որ նրա հեղինակը յօրինել ու գրել է բարձրարժէք գեղարուեստական գլուխ գործոցներ, որոնք տարբեր ճանապարհներով հասել են մեզ: Եւ կասկածներն ամենեւին էլ տեղին չեն: **Արիստակէս Տեկանցը** միամիտ չէ, երբ հայրենների հեղինակ Ն. Քուչակին է համարում: Տաղարան ձեռագրերի լաբիրինթոսում նիւթի ճնշումից շփոթուած մէկ-երկու բանասէրների համար դժուար է տեսնել Քուչակի իրական մեծութիւնը, մինչդեռ օտարերկրացիներն առաջին հերթին որսում են նրա հանճարի փայլն ու զմայլանքը, զարմանում մեզ վրայ դա շտեմնելու համար: Քուչակի հայրենների **Փրանսերէնի թարգմանիչ Էդ. Ֆագին** նրան համեմատում է **Օմար Խայամի հետ**⁸², իսկ **գերմաներէնի թարգմանիչ Հանս Բեթգեն** նրան համարում է հայկական սոխակ՝ գրելով. «Տարօրինակ է, որ Քուչակը գերմանացիներին, որոնք, ինչպէս ոչ մի այլ ժողովուրդ, համաշխարհային գրականութիւնը բացայայտել գիտէին, մինչեւ օրս անյայտ է մնացել: Քանզի այդ երգիչն Արեւելքի ամենակախարհական պոետիկ կերպարներից մէկն է, եւ նրա սիրոյ քնարի ակորդներում այնքան կիրք եւ կեանքի հարուածներին հնազանդ դիմակայելու կարողութիւն կայ»⁸³:

* * *

Նահապետ Քուչակը հասարակ գիւղացու զաւակ է: Թերեւս դա է պատճառը, որ նրա հայրեններից մէկի հերոսուհին իրեն սէր խոստովանող եւ իր հօրից վախեցող պատանուն խրախուսում է.

**Ասա՛, կտրիճ, մի՛ վախէր, շատ հարուստ է տառպելացել.
Անչափ հարըստին դըստրիկ տառպելին ծոցիկն է օթեր:**

Սակայն Քուչակը սիրուց ետ կանգնողներից ու արկածներից վախեցողը չէ: Նա եղել է վարպետ աշուղ: Սկզբում ինքն է սովորել վարպետ աշուղի մօտ, յետոյ սովորեցրել միւսներին: Օրինակ, աշուղ Մուշոն իր արուեստը զարգացրել է Քուչակի մօտ, մեկնել Սուրբ Կարապետի վանք՝ ստանալու նաեւ սրբի շնորհը: Ընդհանրապէս ժամանակին շատ կարեւորուել է մանուկների կրթութեան ու դաստիարակութեան գործը: «Տարաբախտաբար նրա (Քուչակի - Ս. Մ.) մասին ոչ մի գրաւոր յիշատակարան չէ մնացել»⁸⁴, - գրում է Խրիմեան Հայրիկը, ցաւօք, չիմանալով ձեռագրական թէկուզեւ սուղ նիւթերի մասին: Բայց, ինչպէս արդէն ասուել է, աւանդագրոյցները հնարաւորութիւն են տալիս լրացնելու այդ պակասը: Ս. Կարապետի վանքում ուսանելն էական նշանակութիւն կարող էր ունենալ եւ ունեցել է բանաստեղծի կեանքում, քանի

⁸¹ Տէ՛ս նոյն տեղում, էջ 245:

⁸² E Fazi, Mercur de France, 1906, 6 sept..

⁸³ H. Betge, Die Armenische nachtigall, Berlin, 1924, p. 124.

⁸⁴ Տէ՛ս նոյն տեղում, էջ 93:

որ այնտեղ սովորողները լուրջ գիտելիքներ էին ձեռք բերում, թէկուզեւ 16-րդ դարում, երբ թուրք-պարսկական պատերազմը խախտել էր տարածաշրջանի մարդկանց անդորրը:

Դեռեւս 11-րդ դ. այդ վանք է տեղափոխուել Գրիգոր Մագիստրոսը՝ միջնադարի մեծ իմաստասէր ուսուցչապետը, աշխարհիկ մի անձնաւորութիւն, այնտեղ բերելով իր ճեմարանական դպրոցը: Հէնց այս իմաստասէրին է պատկանում Ս. Կարապետի վերանորոգչական աշխատանքներն ու մեծ առաջընթացը նոյն դարում⁸⁵: Մի անձնաւորութիւն, որ լրջօրէն զբաղուել է մանուկների կրթա-դաստիարակչական խնդիրներով եւ տեսականօրէն զարգացրել հայ մանկավարժական միտքը⁸⁶: Այստեղ է սովորել եւ Նահապետ Քուչակը, թէեւ այդ ժամանակ արդէն նախկին դպրոցի փառքը մարել էր (պատերազմը տեւեց 125 տարի (1514-1639 թթ.) ամայացնելով Հայաստանի եւ Արեւելեան, եւ Արեւմտեան մասերը): Բայց դպրոցներ այնուամենայնիւ գործել են ինչպէս Արեւմտեան, այնպէս էլ Արեւելեան Հայաստաններում⁸⁷:

Իր յիշատակարանում Թոռ Քուչակը վկայում է, որ պապը վարպետ աշուղ է: Դա նշանակում է, որ նա ունեցել է աշակերտներ, որոնց փոխանցել է իր հարուստ գիտելիքները եւ հմտութիւնները: Դա գրեթէ միշտ էլ այսպէս էր. վարպետները սկսնակներին էին փոխանցում իրենց փորձը: Այս ամէնից յետոյ կարելի է խօսել եւ աշուղական դպրոցի մասին: Խորմեան Հայրիկի յիշատակութիւնն աշուղ Մուշոյի մասին հէնց այնպէս ասուած խօսքեր չեն եւ ունեն իրենց իրական հիմքը: Կարելի է անգամ կարծել, որ Թոռ Քուչակն էլ պապի դպրոցում է սովորել եւ նրա սաներից է: Դա է նաեւ պատճառը, որ նա վերջինիս նկատմամբ խորը երկիւղածութիւն ունի: Իսկ քուչակեան դպրոցը զգալի հետք է թողել ժամանակի հայ կեանքում՝ առանց դոյզն չափազանցութեան: Գ. Լեւոնեանը արեւմտահայ աշուղական դպրոցներից յիշատակում է միայն թուրք-հայկական դպրոցը՝ նրա գործունէութեան սկիզբը դնելով 18-րդ դարի 30-ականները (Կ. Պոլիս, հիմնադիրներ՝ Արթին եւ Ռումի)⁸⁸, սակայն ակնյայտ է, որ արդէն 16-րդ դարի կէսերին Վասպուրականի Խառակոնիսեան դպրոցն ամենաառաջնակարգն ու թերեւս ամենաառաջիններից մէկն է եղել հայ կեանքում հէնց Քուչակի շնորհիւ:

Խորմեան Հայրիկն աշուղների մասին գրում է. «Կան աշուղներ, որ աւելի բարոյական խրատներ ունին եւ գեղեցիկ բանաստեղծական գրութքներ կը շինեն սուրբերուն վրայ ... Յիսուս առաքելոց պատուիրեց, որ ցուպ ու մախաղ չառնեն ի ճանապարհին, աշուղներ ճիշդ կը պահեն այս պատուերն, անտուն, անընչասէր, թափառաշրջիկ մարդիկ են ... (ժողովրդի - Ս. Մ.) համար աշուղ՝ տիրացուէն շատ գերազանց է, վարդապետի քարոզէն աւելի՝ հէքիաթն անուշ է»⁸⁹: Նրանք այն միջնորդ օղակն են, որ կապ են հաստատում ժողովրդական եւ բանաստեղծական բարձր արուեստի (անհատական քերթութիւնների) միջեւ՝ ժողովրդականից սնուցանելով հեղինակայինը: Միւս կողմից՝ բարձր արուեստի ձեռքբերումները հասանելի են դարձնում ժողովրդին՝ կրթելով ու դաստիարակելով գեղարուեստի ոգով: «Սրանց ինչպէս չսիրենք, որ իրենք իսկի չեն պակսեցրել սէրն,- գրում է Գ. Ախվերդեանը,- ...

⁸⁵ Զումարեան Թ., Հայ գրականութեան մեթոդիկա, էջ 20-22:

⁸⁶ Աբեղեան Մ., Երկեր, հ. Դ, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հր., 1970, էջ 37-39. Մխիթարեան Ս., Գրիգոր Մագիստրոսի կեանքը եւ գեղարուեստական ժառանգութիւնը, Երեւան, 2001, էջ 24-29:

⁸⁷ Սիմոնեան Յ., Ակնարկներ հայ դպրոցի եւ մանկավարժական մտքի պատմութեան, Երեւան, ԵՊՀ հր., 1971, էջ 82, 84: Նաեւ՝ Նազիկեան Գ., Արեւմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երեւան, Լոյս հր., 1969, էջ 18:

⁸⁸ Լեւոնեան Գ., Աշուղները եւ նրանց արուեստը, Երեւան, 1944, էջ 36:

⁸⁹ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, էջ 85-86:

ինչ տեղ վարդապետն պակսեցրել է քարոզն, սրանք անդադրիլ՝ թէ՛ սիրտը շահելով, թէ՛ խրատով կրթիլ են իրենց ժողովրդին»⁹⁰։ Վազգէն վեհափառն այդ կրթեղանակն է տեսել **Խրիմեան Հայրիկի** գործունէութեան մէջ ու դա «Պապիկ եւ Թոռնիկ»-ի առումով անուանում է «գործնական մանկավարժութիւն»⁹¹։ Դաստիարակութեան մի ինքնաբոլոր ժողովրդական եղանակ, ուր բոլոր մեծերը (աւագները) անխտիր ամէն ինչ անում են իրենց գիտելիքները եւ ամբարած փորձը գործնականօրէն փոխանցել մանուկներին եւ պատանիներին՝ սկսած եզները կապել-արձակելուց, մինչեւ վար ու ցանք անելը։

Կարծում ենք, որ աւանդաբար մեզանում մանուկներին դաստիարակել են յատկապէս նախնիների յիշատակների վկայակոչումներով։ Նրանց պանծալի կեանքը, սխրանքը, քաջագործութիւնը կամ սրբական կենցաղը միշտ էլ ընդօրինակելի է եղել գալիք սերունդների համար⁹²։ Դա արտայայտուել է նախ այսպիսիների անձի, այնուհետեւ գերեզմանների սրբացմամբ։ Որ Քուչակի գերեզմանը համարուել է սըրբատեղի, եւ ժողովուրդն ուխտի է գնացել նրա շիրիմին, յայտնի է շատ վաղուց։ Այս դէպքում Քուչակը կարող է համեմատուել Ս. Գրիգոր Նարեկացու հետ, որի գերեզմանն աւելի վաղ է սրբացուել, եւ շատերն են բուժուել իրենց ուխտագնացութիւնների ժամանակ։ Ուրեմն Նահապետ Քուչակի անձը, նրա գործը եւ սրբացուած գերեզմանը հայ հասարակութեան համար օրինակ է՝ արժանի մեծարանքի եւ երկիւղած բարձր վերաբերմունքի։

Աւանդազրոյցների տրամադրած նիւթերի հիման վրայ հնարաւոր է դառնում խորանալ Քուչակի կեանքի էական շատ մանրամասների մէջ եւ ունենալ կեանքով ու իմաստութեամբ լեցուն, ուրախ ու սրամիտ, կատակասէր ու ցնծուն, փորձութիւնների պահին քաջասիրտ, կենսասէր հերոսի գրեթէ ամբողջական մի դիմանկար։ Կենցաղում նա մի սովորական հայ մարդ է, որ իր արտը, բանջարանոցն ու այգին է մշակում՝ ընտանիքի հոգսերը հոգալու համար, եթէ ժամանակ է գտնում։ Վանեցին դեռ արգիշտեան ժամանակներից երկրագործ է։ Անասնաբուծութիւնը եւս խորթ չէ նրա սրտին, քանզի աշուղն ամենուր հօտաղների է հանդիպում, որոնք հանելուկ ասելուց ու երգելուց զատ նաեւ սոլ ու կոշիկ են կարում, իսկ աշուղի հայրը նրան է տալիս իր սեւ եզանը, որ ձիերից աւելի արագ է բանաստեղծին տեղ հասցնում։ Այս մարդիկ միաժամանակ կառուցողներ են։ Վանայ բերդից հազարաւոր տարիներ անց վանեցին կամուրջ ու եկեղեցի է կառուցում, տուն է շինում ու դրան մասնակից է նաեւ Քուչակը։ Վան-Վասպուրականեան միջավայրում անշափ շատ են եղել էպոսի հմուտ ասացողները, հէքիաթասացները, տաղասացները, հայրեններ, երգեր ու հանելուկներ յօրինողները, երգիչներն ու կատարողները։ Սրանք հարուստ երեւակայութեան ու շնորհքի տէր անձինք են՝ օժտուած գեղարուեստական անսանձ երեւակայութեամբ։

Այսօր եւս մատաղ սերունդը կրթութեան եւ դաստիարակութեան կարիք ունի։ Քուչակեան հայրենների կենսասէր հերոսը եւ աւանդազրոյցների սրամիտ բանաստեղծ-աշուղը շատ ընդհանրութիւններ ունեն։ Քուչակի կենսագրութեան նորովի գիտական մշակումը եւ ամբողջացումը խորապէս կը նպաստի նրա կեանքի շատ հանգամանքներ ճշտելուն, ճշմարտութիւնը եւ բանաստեղծի կեանքն ու գործը հնարաւորինս ստույգ ներկայացնելուն։ Դրա հետ մէկտեղ, մենք կարող ենք բազմակողմանիօրէն ուսումնասիրողներին ներկայացնել քուչակեան բարձրարուեստ աւանդազրոյցները, որոնք գեղարուեստական մեծ արժէք են ներկայացնում։

⁹⁰ **Սայեաթ-Նօվայ**. Լոյս գցած աշխատասիրութեամբ Գէորգեայ Ախվերդեան, Մոսկուայ, 1852, էջ Ա։

⁹¹ Տե՛ս Վազգէն Ա. Կաթողիկոս, Գալիլի տեսիլով (ուսումնասիրութիւններ, յօդուածներ, ուղեգրութիւններ - 1933-1954 թթ.), Բ. Ա. Ս. Էջմիածին, 1988, էջ 129։

⁹² **Բաբանսկի Յ.**, Մանկավարժութիւն, մաս 2, Երևան, 1987, էջ 182-194։

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Նոր սերնդի համար 19-րդ դ. 60-70-ականներին կրկին Նահապետ Քուչակը դառնում է ուշագրություն արժանի աշուղ-բանաստեղծ, իսկ դարավերջին խրիմեան Հայրիկն առաջինն է քուչակեան ավանդազրույցների նիւթն օգտագործում դաստիարակչական նպատակներով: Կարելի է ասել քուչակագիտության զարգացման հէնց սկզբից սրամիտ ու կենսասէր Նահապետ Քուչակի կերպարը գրաւիչ է եղել եւ օրինակելի: Աւանդազրույցների հերոսը հաւատի տներ ու կամուրջներ է կառուցել իր հոգու հանգստության համար, գրաւել կրթության եւ դաստիարակության խնդիրներով մտահոգ մեր նախնիների ուշագրությունը:

2) Խաղասաց-երգիչներն իրենք էլ իրենց կարելիության չափ ազդում էին հասարակ մարդկանց (խալխի) ճաշակի, մտքի ու գիտակցության վրայ, մեջլիսներում իրենց բարի խրատներով, վեհացնող մտքերով, հերոսական նախնիների օրինակով կրթում էին նաեւ մատաղ սերնդին: Խօսքը մասնաւորաբար վերաբերում է վարպետ աշուղներին, որոնք ունէին իրենց դպրոցները, ուր նրանք դաստիարակում էին երիտասարդներին՝ փոխանցելով նրանց իրենց գիտելիքները, հմտութիւնները, այն է՝ աշուղական արուեստը՝ միաձուլուած խօսքի, մեղեդու եւ կատարման արուեստներին:

3) Հերոսը սկզբում սրբացւում է. Արճակա լճի **Կրեղէն մարդն** անմահական հեղուկ (դուռ) է խմեցնում նրան, եւ նա ստանում է Ս. Կարապետի հովանաւորութիւնը, փրկւում է սուլթանի մանկան կեանքը: Այնուհետեւ կառուցւում է եօթ վանք, իսկ վերջինը Ս. Թէոդորոս (Թադէոս) վանքն է, որի աւարտի ժամանակ նա ընկնելիս հրեշտակների շնորհիւ փրկւում է: Նրա յիշատակը սրբացւում է՝ յետագայում վանքի բակում թաղուելով: Գերեզմանի վրայ բուժուում են հիւանդներ եւ այն դառնում է ուխտատեղի: Թէ՛ ժողովրդի մէջ, թէ՛ բարձրաշխարհիկ միջավայրում աշուղի պանծացումն արդիւնք է նախնիների յիշատակի սրբացման:

4) Թուրքական զինուորների, աշուղների եւ պաշտօնեաների, ինչպէս եւ սուլթանի բացասական վերաբերմունքը հայ աշուղի, քրիստոնէական կրօնի ու կրօնական հաստատութիւնների հանդէպ զգացւում է նաեւ ավանդազրույցներում: Դրանում կայ եւ հայ հասարակության անվստահութիւնը թուրք պետության ու սուլթանի հանդէպ: Ծանր է հայութեան իրաւագուրկ վիճակը՝ մշտական սպառնալիքներ, նուաստացումներ: Անգամ սուլթանի սովահար մանկանը փրկելուց յետոյ Քուչակը ստիպուած է նրա առաջ շատ նուաստացումների գնով փրկել իր կեանքը, արժանապատուութիւնը:

5) Կարծում ենք, որ եթէ ոչ նոր դաւթար (բնագիր), ապա գոնէ թանկ պատառիկ-մասունքներ եւ ինչ-ինչ կարեւոր վկայութիւններ շարունակաբար յայտնաբերւում են ու դեռ կը յայտնաբերուեն Քուչակի մասին: Դա վերաբերում է ինչպէս **ա) Ար. Տեկանցի ձեռքի տակ եղած, այնպէս էլ բ) Դ. Ալիշանի եւ գ) Ն. Բիւզանդացու ունեցած եւ օգտագործած նիւթերին** (Ոչնչացուած Վարագավանքի բնագիր-օրինակ դաւթարին⁹³, վենետիկեան ձեռագրերում անյայտութեան մէջ հանգչող Քուչակ Հառկուանցու անձին ու գործին՝ յիշատակուած Ալիշանի մօտ, ինչպէս եւ Ն. Բիւզանդացուն ծանօթ Ֆ. Ռիվոլայի ու իր վանեցի տպագրիչների թանկարժէք նիւթերին մեծ աշուղի մասին՝ պահպանուած Վատիկանի գրադարանում):

* * *

Գ. Լեւոնեանի դիպուկ բնութագրմամբ. «Բանաստեղծներ կան աշուղների մէջ,

⁹³ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխատքը, էջ 132-142:

բայց բոլոր աշուղները բանաստեղծներ չեն»⁹⁴։ Նահապետ Քուչակը բանաստեղծ աշուղ է։ Նրա մասին Ուիլիամ Սարոյեանը գրում է. «Անշուշտ, նրանք (Սարոյեանները - Ս. Մ.) այնտեղ (Թուրքահայաստանում) ապրելիս են եղել մինչև 1905 թվականը, երբ իմ հայր Արմենակը միայնակ բռնեց Նիւ Եորքի ճանապարհը, իսկ մի տարի անց նրան միացավ իմ մայր Թագուհին, երկու քույրերս, եղբայրս. մի ամբողջ գերդաստան՝ շրջապատուած Սարոյեանների ուրիշ խմբերով՝ Բիթլիսից եւ Գալիֆորնիայից, մի մեծ գերդաստան, որ բառիս բուն իմաստով լիքն էր պոետներով եւ քարոզիչներով, որոնցից ոմանք, ի հարկէ, նման չեն Քուչակին կամ Նարեկացուն՝ սիրոյ լուսնոտին եւ Աստծուն ու կատարելութեանը։ ... Ինչո՞ւ մեզ մօտ այսքան զանազանութիւններ կան. Քուչակի պէս աղջիկ սիրողներ, Նարեկի պէս Աստուածասէրներ»⁹⁵։ Միանգամայն արդարացի է մեծ բիթլիսցին։ Իսկապէս, ինչո՞ւ են այդքան իրարից տարբեր միջնադարի երկու բացառիկ հանճարները՝ սիրոյ լուսնոտը եւ տիեզերական աստուածասէրը։

Եւ այն, ինչ արել են Արիստակէս Տեւկանցը, Արշակ Զօպանեանը, Նորայր Բիւզանդացին, Վ. Բրիւսովը, նախորդ եւ նոր ժամանակների գիտնականները Ն. Քուչակի անունը պանծանցնելու ուղղութեամբ, անգնահատելի ծառայութիւն է ինչպէս հայ ժողովրդին, այնպէս էլ համայն մարդկութեանը։ Ու մենք կրկին այս գիտնականների հանդէպ մեծագոյն երախտագիտութեամբ պէտք է մեկընդմիշտ յիշենք, որ Նահապետ Քուչակը սովորական աշուղ չէ, ոչ էլ հասարակ բանաստեղծ, այլ հանճար, որի կեանքն ու գործը պիտի շարունակաբար արժեւորուեն։

Ստիպուած եմ նաեւ յիշելու Քերթոզահոր խօսքերը, թէ մենք էլ առանց մեղադրական յիշատակութեան չենք թողնում մեր անիմաստասէր նախնիների ու ժամանակակիցներից ոմանք բարքերը, որոնք (քուչակամերժ գիտնականները) ուրիշներին գցել են թիրիմացութեան թակարդը, իսկ իրենք էլ ընկել մի վիճակի մէջ, երբ մարդկանց այդ փոքրաթիւ խումբը, չկարողանալով արդիւնաւէտ ու կառուցողական որեւէ բան տալ քուչակագիտութեանը, էական ոչինչ չանելով, հարկադրաբար ու մշտապէս պտտում է արատաւոր շրջանի մէջ ու կրկնում, որ չկան քուչակեան հայրեններ, որ ոչինչ չկայ, որ նա մի շատ համեստ կարողութիւնների տէր աշուղ է ... Դա ոչ այլ ինչ է, քան հարցը գիտակցաբար փակուղի մտցնելու եւ բանաստեղծական մեծութիւնը նսեմացնելու տխուր փորձ...

Աւարտենք մեր խօսքը քուչակեան մի սքանչելի հայրենով։ Նրանում քնարական հերոսը կրկին սիրոյ տէր է եւ օտարութիւն է գնում։ Բանաստեղծը յուշում է՝ թող գիշերը տղան չքնի ու գնա-հասնի յարին, ինչպէս ջուրը.

Ջուր, գլգլալէն կու գաս, գետի թորակէն կու գաս,

Երթաս այդ ձորերդ ի վայր, ձայնդ կայ, ու դուն չերեւաս...

Ի՞նչ իմանար, թէ տարաբախտ սիրահար պանդուխտի կամ գետի ջրի օրը կ'ընկնի եւ ինքը՝ բանաստեղծը, երբ իր երգն ու ձայնը կան, ու ինքը մէջտեղում չկայ։ Ցաւօք, մեզանում ոմանք դեռ երազում են, որ ո՛չ բանաստեղծի ձայնը լինի, ու ո՛չ ինքը երեւայ ... Բայց ամէն ինչ դեռ վերջացած չէ։

Քանի դեռ արեւի տակ կը հնչի հայ խօսքը, կը հնչեն նաեւ սիրահարների սրտերը նուաճող քուչակեան լուսաշող հայրեններն ու նրանց հեղինակ Նահապետ Քուչակի անմահ անունը, քանզի ժողովուրդը երբեք չի դաւաճանի իր հանճարեղ զաւակին։

⁹⁴ Լեւոնեան Գ., Հայ աշուղներ, Երևան, 1937, էջ III:

⁹⁵ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխատքը, էջ 427:

Եւ այն, որ հայ հոգեմտաւոր բացառիկ ճիգն ի վերջոյ արժանացել է համամարդկային մեծ ուշադրութեան եւ բարեհաճութեան ու այսպէս անպատասխանատու կերպով վիժեցում է մեր մեղքով, ի հարկէ, ոչ մի արդարացում չունի, եւ ուղղակի կարճամտութեան դրսեւորում է: Արդարացուցիչ չէ նրանց կատարածը, ովքեր հարցը մատուցում են այնպէս, թէ իբր Քուչակին մեծարողները կեղծ փաստերի ու ազգային արժէքների նենգափոխման, իսկ որոշ դէպքերում էլ շիմացութեան ճանապարհով են ստեղծել բանաստեղծի համբաւը եւ նրան ներկայացրել իբրեւ մեծութիւն, ինչին նա արժանի չէ: Իւրաքանչիւր քուչակագէտ, որ համակրում է նրան ու պաշտպանում, ելնում է մի շատ կարեւոր սկզբունքից: Դա հետեւեալն է. այն, ինչ ստեղծել է Քուչակը, անհատական բարձր բանաստեղծութիւն է՝ արժանի մեծ ուշադրութեան: Ժողովրդական բանարուեստի ազդեցութիւնները նրանում նկատելի են, սակայն տիրապետողը անհատականն է դրանցում: Չմոռանանք, որ բանաստեղծն իր ժողովրդի յոյգերն ու զգացմունքներն է փոխանցում գրականութեանը: Այդ է այս հասարակ ու հանճարեղ աշուղի «մեղքը»:

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՍՔ

Ընդվզումը երբեք լսելի չդարձած մարդոց լեզուն է:

Գերեզմանները լի են... անփոխարինելի մարդոցմով:

Կատարեալ ընթերցողը՝ լիակատար անքնութեամբ տառապող ընթերցողն է:

Ան, որ բան մը չըներ, մշտապէս շատ օգնականներ կ'ունենայ:

Աշխարհը կը կառավարեն հասակ առած երիտասարդները...

Իշխանութիւնը առատութենէն ճաթող այն սեղանն է, որմէ ոչ ոք կամովին չի հրաժարիր:

Ախտորոշումը այնպիսի յաջողութիւններու հասած է, որ առողջ մարդ, ըստ էութեան, չէ մնացած:

Անկեղծ ու անկաշառ բարեկամութիւնը հնարաւոր է հաւասարաշափ եկամուտ ունեցող մարդոց միջեւ միայն:

Գիրքեր այրելէն աւելի սարսափելի արարք ալ կայ՝ չկարդալը...

Ազատութիւնը ինքնին ոչինչ չարժէ, եթէ այն իր մէջ չունի նաեւ սխալելու ազատութիւնը:

Խիղճին առնչուող հարցերը ձայներու մեծամասնութեամբ չէ, որ կը լուծուին: